ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ծովասար համայնք, 1-ին փ. 45. Հեռ. (0262) 6-35-47
Էլ. փոստ. tsovasar.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » սեպտեմբերի 2017թ. թվականի N 20 – Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լսեցին, որ Ծովասար համայնքի նոր գերեզմանոցի ցանկապատի ընթացիկ նորոգման աշխատանքներ կատարելու համար՝ գումար փոխանցելու նպատակով և ՀՀ «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին, «Ծովասար համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոպերատիվին ներդրում կատարելու համար Ծովասար համայնքի 2017թ. վարչական բյուջեում կատարել փոփոխություն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և 32-րդ հոդվածի 4-րդ կետի՝ համայնքի ավագանին որոշում է:

Ծովասարի ջրամատակարարում ծախսերի գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 1 և ծրագիր 51 տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից պակասեցնել 1961500 դրամ և ավելացնել 954000 դրամ Ծովասարի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 6, դաս 1 և ծրագիր 51 տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին և 1007500 դրամ էլ Ծովասարի գյուղատնտեսություն ծախսերի

գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 02, դաս 01 և ծրագիր 55 տնտեսագիտական դասակարգման 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին:

Կողմ (7)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Արտավազդ Նազարյան		
Զարզանդ Հարությունյան		
Լյուդվիկ Մկրտչյան		
Նաիրի Վարդանյան		
Կարեն Մարտիրոսյան		
Հրայր Հարությունյան		
Վարդան Հակոբյան		

12/13/2017

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏԱՇԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ**